**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/15 ծածկագրով Ախուրյանի Ն. Աղբալյանի ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 26.06.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահող՝ | Ա. Քոչարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էր՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին**

-----------------------------------------------------------------------------------------

(Ա. Քոչարյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցի՝ <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են.

- հայտով ներկայացված բոլոր մասնագետների մասով վերջիններիս գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունը մատուցելու վերաբերյալ,
- որակավորումը հավաստող փաստաթղթերի (ԲՈՒՀ-ի կողմից տրված դիպլոմ, համապատասխան լիազորված մարմինների կողմից տրված արտոնագրեր) պատճենները,
- ընդհանուր աշխատանքային և մասնագիտական փորձառության մասին տեղեկատվությունը հաստատված հայտը ներկայացնողի կողմից՝ համաձայն ձևաչափի (CV),
- էսքիզային նախագիծը,
- որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ՝ նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ նախագծի փորձաքննության դրական եզրակացությունը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 10 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

Նմանատիպ է համարվում IV կամ IV-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի հասարակական կամ բնակելի նշանակության օբյեկտի կառուցման կամ վերակառուցման կամ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը՝ իրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում, որը պետք է ստացած լինի համապատասխան քաղաքաշինական պարզ և համալիր դրական փորձաքննությունների եզրակացությունը:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել **<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 29.06.2026թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացնելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/15 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender1@minurban.am էլ. փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ -0

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

------------------------------------------------------------------------------------------

(Ա. Քոչարյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 30.06.2026թ. ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ -0

Հանձնաժողովի

Նախագահող՝ ------------------------------------------ Ա. Քոչարյան

Անդամ՝ ------------------------------------------ Հ. Գինովյան

------------------------------------------ Տ. Կոմիտասյան

------------------------------------------ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------ Ն. Հարությունյան